Հաշվեկշիռը
գնահատում ենք գերազանց:
Մ.Ա. 03.03.2025թ.

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
հանրային կապերի և տեղեկատվության բաժնի պետ
Աստղիկ Մելիք-Քարամյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

02.09.2024 – 28.02.2025թթ. ժամանակահատվածում որպես Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի հանրային կապերի և տեղեկատվության բաժնի փորձագետ իրականացրել եմ բաժնի գործառույթներից բխող հետևյալ աշխատանքները.

- Կոմիտեի տեղեկատվական գործունեությանը վերաբերող լրահոսի, վերլուծական և տեղեկատվական նյութերի, պրեզենտացիաների, զեկույցների պատրաստում և խմբագրում:
- Վերոնշյալ նյութերի թարգմանություն օտար լեզուներով:
- Կոմիտեի տեղեկատվական գործունեության համար նոր թվային հարթակների ստեղծում:

Մասնավորապես, գործունեությանս արդյունքում արձանագրվել են հետևյալ միջանկյալ արդյունքները.

- Նախագծվել է Կոմիտեի նոր կայքը՝ համապատասխանեցվելով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության արդի պահանջներին և Կոմիտեի գործունեության համար անհրաժեշտ ֆունկցիոնալին.
- Մշակվել է Կոմիտեի մեդիառազմավարությունը ընթացիկ տարվա համար, սահմանվել են մեդիա-ներկայության ընդլայնման ուղղությունները, մասնավորապես՝ ստեղծվել և վարվում են Կոմիտեի պաշտոնական էջերը *LinkedIn*-ում և *X*-ում, ինչպես նաև մշակվել է Study and Research in Armenia նոր պորտալի հայեցակարգը, որի վրա աշխատանքները կշարունակվեն հաջորդ փուլում:
- Տեղեկատվության հետ աշխատանքի գործընթացը ավտոմատացվել է՝ կիրառելով արհեստական բանականություն, տեքստի հետ աշխատելու գործիքներ (Grammarly, Reverso), ինչպես նաև ստեղծելով թարգմանությունների միաձևությունն ապահովող գլոսսարիում՝ SmartCAT մասնագիտական հարթակի միջոցով: Սա հնարավորություն է տվել զգալիորեն արագացնել աշխատանքային գործընթացները և ապահովել Կոմիտեի դրամաշնորհային մրցույթների հրավերների մեծ մասի թարգմանությունը:

- Պատրաստվել է Կոմիտեի կայքի և սոցիալական ցանցերի համար տեղեկատվական հոդվածների շարք:
- Անգլերեն լեզվով թարգմանվել է Կոմիտեի կայքի և սոցիալական ցանցերի հիմնական լրահոսը:
- Ստեղծվել են տեղեկատվական նյութեր, որոնք նպաստում են Կոմիտեի գործունեության մասին քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանը (մասնավորապես՝ գիտության և բարձրագույնն կրթության ոլորտի բարեփոխումների մասին տեսանյութի սցենար՝ բաժնի գործընկերների հետ համագործակցությամբ, անգլերեն վերլուծական հոդված՝ Ակադեմիական քաղաք նախագծի վերաբերյալ և այլն):

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի
հանրային կապերի և
տեղեկատվության բաժնի փորձագետ Արման Աբրահամյան

03.03.2025թ.